ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1956 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԳԻՐՔ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Աշխարհագրական գրականության պետական հրատարակչությունը ռուսերեն լեզվով լույս է ընծայել «Հայկական ՍՍՌ» գիրքը, որը ռուս ընթերցողին ծանոթացնում է Սովետական Հայաստանի բնությանն ու ժողովրդական տնտեսությանը։ Աշխատությունը գրել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի էկոնոմիկայի ինստիտուտի և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Աշխարհագրության ինստիտուտի գիտական աշխատողների կոլեկտիվը։

Աշխատության սկզբում տրվում է Հայկական ՍՍՌ բնական պայմանների համառոտ նկարագրությունը։ Գրքի այս գլխից, որ գրել է Ա. Բ. Բաղդասարյանը, ընթերցողը կարող է ընդհանուր գաղափար կազմել Սովետական Հայաստանի ռելյեֆի, գեոլոգիական կառուցվածքի, օգտակար հանածոների, հանքային ջրերի, կլիմայի, հիդրոգրաֆիայի, հողի, բուսական և կենդանական աշխարհի մասին։

Գրքի երկրորդ գլուխը ներկայացնում է համառոտ ակնարկ հայ ժողովրդի պատմության։ Նրա հեղինակները՝ ընկ. ընկ. Ա. Մարուխյանը և Ե. Սարկիսովը համառոտակի կանգ են առնում հայ ժողովրդի ձևավորման պրոցեսի, նրա պատմության հիմնական էտապների վրա։ Նրանք ցույց են տալիս Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պրոգրեսիվ մեծ նշանակությունը։ Գրքում ընդգծվում է, որ հայ ժողովրդի ազատագրման սկիզբը դրեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որը աշխարհի ժողովուրդներին ցույց տվեց կապիտալիզմի լծից ազատագրվելու ուղին և նոր դարաշրջան բացեց համաշխարհային պատմության մեջ։ Հայաստանի աշխատավորությունը Սովետական Ռուսաստանի և նրա հերոսական Կարմիր Բանակի օգնությամբ մեկընդմիշտ տապալեց հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ, անգլո-ամերիկյան իմպերիալիստների գործակալներ՝ դաշնակների արյունարբու տիրապետությունը և հաստատեց Սովետական իշխանություն։ Սովետական իշխանության հաստատմամբ հայ ժողովուրդը վերածնվեց ու բարգավաճեց, ստեղծեց ու զարգացրեց իր սոցիալիստական էկոնոմիկան և կուլտուրան։

Աշխատության «Բնակչությունը և կուլտուրան» գլխում, որի հեղինակն է ընկ. Դ. Քոչարյանը, լուսաբանվում է բնակչության տեղաբաշխման, նրա շարժման, խտության և տարաբնակեցման պրոցեսը, քաղաքների ծագումը, կապակցված՝ հասարակության արտադրական գործունեության բնույթի հետ։ Այստեղ տրվում է նաև հայ կուլտուրայի պատմության համառոտ ուրվագիծը սկզբից մինչև մեր օրերը։ Հեղինակը արդարացիորեն ընդգծում է, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ստեղծեց բարենպաստ պայմաններ հայ ժողովրդի համար։ Հայ ժողովրդի կուլտուրան իր իսկական վերածնունդն ու ծաղկումը ապրեց միայն սովետական սոցիալիստական հասարակարգում լենինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ։

«Ժողովրդական տնտեսության ընդհանուր բնութագրությունը» գլխում, որի հեղինակներն են՝ ընկ. ընկ. Գ. Ալահվերդյանը և Ս. Խրիմլյանը, բազմակողմանիորեն լուսաբանվում են Սովետական Հայաստանի վիթխարի նվաճումները ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում։ Այստեղ ցույց է տրվում, թե ինչպես գաղութային հետամնաց ծայրամասից Հայաստանը լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ Սովետական իշխանության տարիներին վերածվեց ինդուստրիալ երկրամասի, իր զարգացած արդյունաբերությամբ և սոցիալիստական մեքենայացված գյուղատնտեսությամբ։ Աշխատության հեղինակները փաստական հարուստ տվյալների հիման վրա ցույց են տալիս այն վիթխարի նվաճումները, որ ձեռք է բերել ռեսպուբլիկան արդյունաբերության զարգացման ասպարեզում։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում ստեղծվեց ժողովրդական տնտեսության էներգետիկ ամուր բազա, կատարվեց վիթխարի առաջընթաց էլեկտրիֆիկացման բնագավառում։ Խոշոր տեմպերով զարկ տրվեց

պղնձի արդյունաբերությանը, ստեղծվեց ալյումինի արտադրություն, քիմիական արդյունաբերություն, որը հանդիսանում է ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը։ Հայրենական պատերազմի տարիներին և ետպատերազմյան շրջանում Հայկական ՍՍՌ-ն դարձավ միութենական նշանակություն ունեցող մեքենաշինության տեղաբաշխման շրջաններից մեկը։ Հայաստանում արդյունաբերության այդ ճյուղի հիմնական ուղղությունը կազմում է էներգետիկ մեքենաշինությունը և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը։ Գրքում բերված են փաստական հարուստ տվյալներ ռեսպուբլիկայում շինանյութերի, թեթև, սննդի և տեքստիլ արդյունաբերության զարգացման վերաբերյալ։

Աշխատության հեղինակները բազմակողմանիորեն լուսաբանում են Սովետական իշխանության տարիներին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիման վրա ձեռք բերված նվաճումները։ Հայաստանի կոլտնտեսությունները ներկայումս միավորում են գյուղացիական տնտեսությունների 99,9 և ցանքատարածությունների 99,9 տոկոսը։ Գրքում փաստական նյութերի հիման վրա ցույց է տրվում գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման, արհեստական ոռոգման սիստեմի ստեղծման, հացահատիկային տնտեսության, խաղողագործության ու բանջարաբուծության, այգեգործության ու տեխնիկական կուլտուրաների, անասնապահության զարգացման ասպարեզում ձեռք բերված հաջողությունները։

Գրքում ցույց են տրվում նաև տրանսպորտի զարգացման ասպարեզում եղած նվաճումները։

Աշխատությունը ավարտվում է «Տնտեսական շրջանները» գլխով, որի հեղինակներն են՝ ընկ. ընկ. Մ. Բուլանովսկին, Գ. Ալահվերդյանը, Մ. Շահբազյանը և Ա. Բաղալյանը։ Աշխատության հեղինակները ելնելով բնության և տնտեսական զարգացման առանձնահատկություններից, ինչպես և հաշվի առնելով տարբեր բնակավայրերի հետագա հեռանկարները, Հայաստանի տերիտորիան բաժանել են ութը տնտեսական շրջանների՝ Կենտրոնական, Սևանի ավազան, Շիրակ, Լոռի-Փամբակ, Լոռի, Հյուսիս-Արևելյան, Դարալագյազ և Զանգեզուր։ Աշխատության հեղինակները տալիս են համառոտ տեղեկություններ այդ շրջաններից յուրաքանչյուրի արդյունաբերության և գյուղատնտեսության, ինչպես նաև նրա բնական պայմանների, բնակչության, քաղաքների ու այլ խոշոր բնակելի կետերի մասին։ Գրքում ցույց է տրվում, որ այդ տնտեսական շրջանները, որոնք արտացոլում են ռեսպուբլիկայի տնտեսության զարգացման բարդ պրոցեսները և գտնվում են ձևավորման տարբեր փուլերում, զգալիորեն տարբերվում են մեկը մյուսից ինչպես իրենց տնտեսության ուղղությամբ և մասնագիտացման աստիճանով, այնպես էլ ռեսպուբլիկայի էկոնոմիկայում իրենց նշանակությամբ։

Սովետական Հայաստանին մոտիկից ծանոթանալուն մեծ չափով նպաստում են գրքում զետեղված բազմաթիվ քարտեզները, նվիրված ռեսպուբլիկայի ինչպես ֆիզիկական աշխարհագրությանը, այնպես էլ արդյունաբերության գյուղատնտեսության տարբեր ճյուղերի տեղաբաշխմանը։ Գրքում զետեղված են նաև մեծ թվով իլյուստրացիաներ, որոնք արտացոլում են ռեսպուբլիկայի ինչպես բնական պայմանները, այնպես էլ արդյունաբերական, գյուղատնտեսական աշխատանքի պրոցեսները, քաղաքային շինարարությունը։ Գրախոսվող դիրքը զերծ չէ նաև թերություններից։ Այսպես օրինակ, շատ աննշան տեղ է հատկացված սովետահայ կուլտուրայի լուսաբանությանը։ Մինչդեռ անհրաժեշտ էր ռուս ընթերցողին բազմակողմանիորեն ծանոթացնել այն վիթխարի նվաճումներին, որ ձեռք է բերել հայ ժողովուրդը Սովետական իշխանության տարիներին գիտության և լուսավորության, գրականության և արվեստի զարգացման բնագավառում։

Սակայն չնայած դրան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի էկոնոմիկայի ինստիտուտը և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Աշխարհագրության ինստիտուտը կատարել են շնորհակալ աշխատանք հրապարակելով «Հայկական ՍՍՌ» աշխատությունը և ռուս ընթերցողին ծանոթացնելով Սովետական Հայաստանի բնությանն ու էկոնոմիկային։

Ա. Հ.